ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2022 թվականի մայիսի 18-ին՝ ժամը 15:00-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի №2 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 թերթ:

Խորհրդի նախագահ՝ **Ա. Առաքելյան**

12.04.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 01-06271-2022
12 05 2022

ՀՀ Արմավիրի մարզի <<<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2. <<Հանրակրթության մասին>> օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5.ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի ապրիլի 13-ից մինչև 2022 թվականի մայիսի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, <<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 18-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի <<Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գյուղ Նոր Կեսարիա, 14 փողոց, շենք 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094780003, 094191950, էլեկտրոնային հասցե՝ norkesaria@schools.am:

ՔԱՂՎԱԾՔ

«Բերքաշատի միջնակարգ դպրոց» և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022 թվականի ապրիլի 12-ի նիստի № 2 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022 թվականի ապրիլի 12-ին:
Նիստին մասնակցում են խորհրդի 14 /տասնչորս/ անդամներից 13-ը /տասներեք/, բացակա՝ 1 /մեկ/ անդամ, հարգելի:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին /զեկուցող, խորհրդի նախագահ՝ Ա.Առաքելյան/:

ԼՍԵՑԻՆ՝

Ա.Առաքելյանը ներկայացրեց, որ «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործող տնօրեն Վարդան Հակոբյանի պաշտոնավարման ժամկետը լրանում է 2022 թվականի սեպտեմբերի 11-ին:

Համաձայն ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 04-ի N 319-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի երկրորդ կետի՝ այն է՝ հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ), տվյալ հաստատության տնօրենի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից հաշված, առավելագույնը 70 աշխատանքային օր առաջ, բայց ոչ պակաս, քան 66 աշխատանքային օր առաջ (չներառելով ամառային արձակուրդի ժամանակահատվածը), ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշում:

Հիմք ընդունելով վերոնշյալը, նույն կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 8-րդ կետերի դրույթները՝

ՈՐՈՇԵՑԻՆ

1. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար հայտարարել մրցույթ:
2. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել www.azdarar.am կայքում հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:
3. Մրցույթն անցկացնել հայտերի ընդունման վերջին օրվանից հետո՝ 10-րդ աշխատանքային օրը՝ ժամը 15:00:
4. Խորհրդի որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:
5. Տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդների հայտերն ընդունել «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում և սույն գործընթացը վերապահել խորհրդի անդամ Կարինե Սարգսյանին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԱՐՏԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ